


ՔԱՍՏԱՆԻ ՊԱՐԹՈՒԹՅԱՆ ԳՐԱՐԱՆ

Պաշտոնային համար
Տարեկան 12 ձր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի
համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ստերիկայի համար
Տարեկան 3 զր.
Վեցամսեայ 1.50 »

Իսկանդրական տպոյ առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սակարկել է. երեքին անգամ անգլիական համար 20 0/0 զեղչ կըլըլայ:

Վասնայի համար ձեռք 40 սակարկել



Նամակ եւ դրամ զրկել ինքնազոտութեան համարին

Redaction na v'etniky "Sharjumi" Varna

n du journal "Sharjumi" (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռք () 20 ՍԱՆԹԻՄ () Պաշտոնային համար ձեռք () 15 ՍԱՆԹԻՄ ()

Փոստովանակ էս չնէ տրուի

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՎ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԵՍՏՐԱՎՈՒԻ ԶՈՐԵՔԵՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՍՏԱՆԻ ՊԱՐԹՈՒԹՅԱՆ ԳՐԱՐԱՆԸ ԲԱՃԱՆԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ԱԶԳԱՅԻՆ ՍԻՌԻԹԻՒՆ



Ա.

Կուսակցութիւններու միութիւնը, որ կարգ մը կարծամիտ և եսամուր մարդիկ իրենց մատին փաթթոց են շինել, լոկ ցնորք մըն է. Պատմութեան մէջ չկան այդօրինակ այլանդակ երեւոյթներ: Էուսակցութիւնները կազմուած կեանքի և իրականութեան անողորմ պահանջներով գոյութեան ամենալայն իրաւունքը ունին և կապրին բնութեան դժած յաւիտենական ու անփոփոխելի օրէնքներով: Եթէ անոնք պէտք չըլլային, չէին ալ ստեղծուեր: Բնութեան օրէնքներուն գէմ թումը կանգնեցնել ձգտող տարրերը արդէն այլասեռուած են ու անհարազատ և գատապարտուած են վերջնական փճացման: Մեր խօսքը—քաւ լիցի—այդ տեսակ միութեան մասին չէ, այլ այն միութեան, որ պատմութեան մէջ յայտնի է ազգային միութիւն անուան տակ և որը կը կազմէ հասարակական գիտութեան մէկ պրինցիպը:

Այո՛, միութիւնը չլացուցիչ խօսք է եղեր, ազգերը ձգտուր են գէպի ան, որովհետեւ անոր մէջ տեսեր են իրենց ոյժը և ազատութիւնը: Կը կրկնենք, որ պէտք չէ շփոթել, մեկ խօսքը ազգային միութեան մասին է և ոչ թէ կուսակցութիւններու միութեան:

Ազգերու ծագումը իրարու չկը նմանին, Խափառաբան զեղծեր, որոնք զատ-զատ ու են ոյժ մը չեն ներկայացուցած և ու են զարգացման չեն հասած՝ միասին հաւաքուելով կազմեր են ազգութիւն մը, այսպիսով անոնք կարողացեր են գիմադրեր արտաքին ու ներքին թշնամիներու և ստեղծել են իրենց գոյութեան համար ուրոյն ոյժ, ուրոյն քաղաքակրթութիւն: Միջին դարու կէսերու մէջ Պրանսա տկար էր, որու պատճառաւ ստիպուած էր և Անգլո-Սաքսոններու լուծը կը-

րել միշտ, բայց երբ Պրանսայի զանազան իշխանութիւնները, դքսութիւնները, կոմսութիւնները միացան Ֆրանսական մէկ դրօշի տակ, այն ատենու ընէ ի վեր Պրանսա սկուա ինքնագլուխ և շեժ ազգ մը դառնալ:

Չերթանք այնքան հեռուն և դիտենք 19րդ դարու վերջին քառորդին մէջ կատարուած նոյն օրինակ երեւոյթները ու կը համոզուինք, որ ան ազգերու կեանքին համար անհամեմատ մեծ կարեւորութիւն ունեցող կենսական հարց մըն է: Բաժան քաժան եղած Իտալիան կը ներկայացնէր Աւստրիոյ լուծին տակ հեծող թոյլ ու անկարեւոր նահանգներ, բայց եկան Կարլպպուտի, Կապուր, Վիկտոր Էմմանուէլ, միացուցին հիւսիսային, միջին և հարաւային Իտալիան ազգային դրօշի մը տակ և այսօր Իտալիան անցած է ազգերու կարգը, ունի իր սեփական կեանքը, ունի իրեն յատուկ և մասնաւոր կուլտուրան:

Նոյնը Գերմանիա: Անթիլ թագաւորութիւններու, իշխանութիւններու բաժնուած Գերմանիան պատմութեան ընթացքին մէջ եղած է շարունակ թոյլ, շարունակ ետ մնացած, բայց երբ Բիսմարկ գլուխ հանեց ազգային միութեան գործը, այսօր Գերմանիա կանգնած է ոյժի, զօրութեան և մեծութեան գագաթնակէտին վրայ, թէ քաղաքակրթական տեսակէտով և թէ ուրիշ ամէն տեսակէտներով: Ի հարկէ իտալական և գերմանական միացեալ ազգութեան մէջ կան ու կը գործեն տասնաւոր կուսակցութիւններ, բայց անոնք չեն խանգարեր այդ ազգերու զարգացումը, չը խանգարելէն զատ նոյնիսկ կը նպաստեն: Այս է իրերու բնական ընթացքը: Եւ այդ քաղաքակրթութեան ազգերուն մէջ չկան ու չեն ալ կարող ըլլար անհեթեթ ինքնակոչներ, որոնք ցանկանային գործող տարբեր կուսակցութիւնները միացնել, Կյոչպէս մարդիկ

քաղաքակրթ ժողովուրդներու մէջ ամենուն ծիծաղը պիտի շարժէին: Ա. ամէն գիտակից հայու համար բնականաբար նոյնպէս ծիծաղելի են Վառնայի հայ «միութեան» կենդանիները:

Իսկանդր բուն հարցին: Ազգային բոլոր զանգուածներու միացման նոյն այս երեւոյթը շատ տեղամ կրկնուած է նաեւ Հայոց պատմութեան մէջ: Արտաշէս Ա. ի, Տրդրան Բ. ի, Տրդատի ատենները, երբ այդ զօրեղ թագաւորները կարողացած էին իրենց գաւազանին տակ պահել ամբողջ երկիրը իրենց նախարարութիւններով, այն ատեն Հայաստան ուժեղ էր և զօրաւոր: Արշակունեաց վերջին թագաւորները իրենց բոլոր ճիգը թափեցին վերջին նախարարական իշխանութիւնները և անոնցմէ կազմել ազգային միացեալ պետութիւն մը, բայց չը յաջողեցան և նախարարներու թշնամութիւնը իրենց գէմ գրգռելով վերջ ի վերջոյ զոհ դացին իրենց ջանքերուն: Բագրատունեաց շրջանի մէջ ալ Մմբատ Ա., Աշոտ Երկակի, Գագիկ Բ. հետեւեցան նոյն քաղաքականութեան:

Հայ ազգի բաժան-բաժան եղած մասերու միութիւնը մեր կեանքի ներկայ պահանջներուն համեմատ՝ այլեւս անհրաժեշտութիւն մըն է այս րոպէիս, ուր Հայութիւնը գոյութեան կատաղի պայքար սկսած է երկու բռնապետութեանց, Թուրքիոյ և Ռուսիոյ դէմ:

Մարգարէտնի

ԱՐԻԻՆԻ-ՀԱՄԵՏԻ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Իւլէմայի մը միջնորդութեան կը պարտի, որ օգտուելով Սուլթանի ուրախ տրամադրութենէն ետ անեւ տուաւ մահուան պատիժը և գոհացուեցաւ: Երբ արեւելքը շրջապատուող ըլլաւ համար պիտի խոստովանիմ, որ ան հոն քանի մը շաբաթուան մէջ մեռաւ: Ինչ կը վերաբերի Ռիֆաթ և

Իլիաս բժիշկներուն, ասոնք ալ հետաւոր դաւառի մը ճահճային շրջաններուն մէջ օգտուելով թեան զրկուեցան: Մէկ ուրիշ դէպք մը յաջորդեց ասոր, Բժիշկ Էմին բէյը, Գիւլ-Հանէի զոչարոցէն վերահաստը խնամելու փառաւոր և վտանգաւոր պաշտօնին կանչուեցաւ: Ասիկա ճարպիկ գտնուեցաւ ալիբի և կտաւատի հասարակ գատաւրամներ գրաւ մարմնի հիւանդ մասերուն վրայ: Այս մեղմացուցիչ ընթացքէն շատ գոհ, Արտուլ-Համիտը անոր շնորհք շնորհքի ետեւէ սկսաւ ընել: Այս դժբաղդ մարդն ալ մեծ կնամով մըն էր իր միւսեւուման կիներէն զատ, սիրական մը ունէր, որ քերթիստոնեայ մըն էր: Վայրկեան մը եկաւ, երբ իր կիրքը այն աստիճանի առաջ դնաց, որ ան ուզեց բաժնուիլ իր օրինաւոր կնոջմէն: Ասիկայ վրէժ առաւ, ինչպէս արեւելքի կիները գիտեն վրէժ առնել Սուլթանին սեղեկագիր մը զրկելով: Աս իր ամուսինը կը մեղադրէր նորին բարձրութեան կեանքին դէմ սարքուած գաւազանութեան մը մէջ: Ըսածներուն հաստատութեան համար փաստեր փաստերու վրայ սկսաւ մատակարարել, չը մտնանք ըսելու, որ այս սիրալիր շար կիրք ամէն տեսակէ զարբնած էր:

Սարսափահար Սուլթանը հրամայեց իսկոյն զայն խեղդամահ ընել իբր յանցաւոր: Բայց պատեւելու վայրկեանին ցաւերը գաղթած ըլլալով մահուան վճիռը փոխեց ցմահ աքսորի: Ո՛չ Էմինը և ոչ ալ ան աքսորէն այլեւս չը վերադարձան: Իր Եմանակին գերմանական լրագիրները լեցուած էին այս ողբերգութիւններու վրայ տրուած անգեկութիւններով: Կ. Պօլսէն ստացած վերջին նամակներէս կիմանամ, թէ նորին վերափառութեան ունեցած հիւանդութիւնը մեծ աւերումներ է գործեր: Մարդ կը խղճայ տեսնելով թէ ինչ մարմնական և հոգեկան ցաւալի վիճակի է մատնուած այնքան միջոնաւոր միւսեւումաններու հրամանատարը, որոնք, ինչպէս որ կըսեն, պատրաստ են իրենց արեան վերջին կաթիլը խալիֆայութիւնը պաշտպանելու համար թափել: Թերեւս խեղցի կերպով կատարուած անդամահատութիւն մը իր խեղճ գոյութիւնը երկարացնէ: Բայց ան միշտ կը մերժէ վերաբուժական որ և է օգնութիւն, նախապաշարուած ըլլալով թէ զանազան իր նպատակէն պիտի չեղի:

Այսուհանդերձ, ո՛վ պիտի կարգայ խորհրդաւոր պալատի մուկ ողբերգութիւնը: Իր յարկերուն խորունկները

կծկուած այս մարդը, որու լոկ անու- նը դողալ կուտայ, ինքը վախի ըստ- րուկն է ։ Քանի անգամ զինքը փա- խեր պահուէր է իր բծիչներէն մէ- կուն անկողին տակ ։ Չէ՞ որ տիւշ- մաններէն ազատուելու համար ամեն երկկոյ տարբեր սենեակ մը կը նստի...

Փորձեցինք քողին ծայրը քիչ մը վերցնել . երանի թէ այս տողերը ֆրանսացի ընկերներու աչքին հան- դիպին, որոնք աշխարհի ամենէն գե- ղեցիկ երկնքի սակ կապրին և դեռ կը գանգատին ճակատագրէն ։

Իր. Հինուսն

ՀԵՐՊԱՐՏ



(Մանկավարժական)

(Շար. 586րդ թիւէն)

Յօդուածով մը ընթերցողներուն մենք ասկէ առաջ ծանօթացուցինք Հէրպարտը իբր գիտական մանկա- վարժութեան հիմնադիրը, Հիմա կանգ կառնենք իր տեսութեանց վրայ քաղ- ուածօրէն յառաջ բերելով անոր ա- մենաէական կէտերը ։ Սկսինք ուրեմն ։

Ա.

Հէրպարտ առաջ կը խօսի երախա- ներու կառավարութեան մասին ։ Ե- րբխաները կառավարելու հոգը կարե- լի էր վերցնել մանկավարժութեան մէջէն և կցել գործնական փիլիսո- փայոյթեան, որ մասնաւոր կերպով կը զբաղի այս հարցերով ։ Եւ այդ կա- րելի է լաւ փաստել, որովհետեւ տար- բեր բան է մտաւոր զարգացումը, տար- բեր բան է կարգապահութիւնը ։ Եթէ առաջինը դաստիարակութիւն անունը կը կրէ, եթէ ան արուեստագէտ մը- շակներ, դաստիարակներ կը պահան- շէ, պէտք է որ անոր վրայ կեդրո-

նանան դաստիարակին տաղանդի բո- լոր ոյժերը և ուրեմն պէտք չէ, որ ան խանգարուի ուրիշ երկրորդական աշխատութիւններով. դաստիարակը, որ պիտի ազդէ երախաներու հոգիին և ներքին աշխարհին վրայ, ասով ա- զատուած կը լլար ուրիշ հոգէ մը ևս ։ Դժուար է երախաները կարգ ու կա- նոնի մէջ պահել, ծնողներ սիրով կը նետեն իրենց վրայէն այդ բոլոր, բայց և այնպէս մարդիկ որք ստիպուած են միշտ երախաներով զբաղիլ՝ այդ կէտը իրենց պարտականութեանց քաղցրագոյնը կը նկատեն, որովհե- տեւ ան առիթ կուտայ անհատի մը իշխելու ձիրքերը կազմակերպել ։ Մանկավարժը սակայն այս հարցերը իրարմէ չի կարող բաժնել, անոնք զիրար կը լրացնեն, Առանց կարգա- պահութեան դասաւանդութիւնը կը կորսնցնէ իր նշանակութիւնը ։ Իսկ աշակերտներուն մէջ կարգապահու- թեան սէր արթնցնելը կըսկսի ծնող- ներէն և կը շարունակուի դպրոցին մէջ ասով տունը կը դիւրացնէ դպրո- ցին գործը ։

Հիմա քննենք թէ ի՞նչ է երախա- ներու կառավարութեան նպատակը ։ Կամքէ բոլորովին զուրկ աշխարհկու- զայ մանուկը, ուստի ան բարոյա- կան կապերու և յարաբերութիւննե- րու մասին ու է գիտակցութիւն չու- նի և ինչպէս առարկայ մը կը հա- մարուի ծնողներուն սեփականութիւ- նը ։ Ծնողները սակայն լաւ գիտեն, թէ օր մը անոր մէջ պիտի կազմուի կամքը, որու հետ պէտք է հաշուել, եթէ երկուստէք անհանդիմանեց անդի տալ չեն ուզեր ։ Փոխանակ կամ- քին առաջին անգամ երախային մէջ կը ծնի վայրենի բնազդ մը, որ երախան կը մղէ ամենակատաղի կամակորու- թեանց և որը անկարգութեանց մտաւ- նացումն է, կը խանգարէ շարահաս- ներու գրած բոլոր կանոնները և զա-

նազան վտանգներու կենթարկէ երա- խայի անձը ։ Այդ կամակորութիւնը և վայրենի բնազդը պէտք է կոտորել, պէտք է ճնշել. հակառակ պարագային երախա- յին մէջ ըսոյն կը զնէ անկարգութիւ- նը, որու համար յանցաւոր են ծը- նողները ։ Ծնելու համար հարկաւոր է ոյժ ։ Այս ոյժը պէտք է այնքան զօրեղ ըլլայ, որ կարենայ զսպել երա- խային մէջ բոլոր կամակորութիւննե- րը անոր կամքի տէր դառնալէ առաջ ։ Այս կը պահանջեն գործնական փի- լիսփայտութեան սկզբունքները ։ (Շարունակելի)

Մարգալեսունի

ՉԻՆԱԿԱՆ ՈՒԹԱՅ-ՉԱՆԿ ԴԵՍՊԱՆԻՆ ՄՕՏ

Վիէնայի Եօճանէսկուստէի 16 թիւ բնակարանին մէջ, ուր Սերպիոյ Միլան թագաւորը իր կեանքի վերջին մասը անցուց, կը բնակի այժմ ժողովրդա- պէս տարիէ մը աւելի Չինաստանի զեսպանը՝ Պ. Ու-Թայ-Չանկ ։ Փայ- լուն կերպարաւք մը ունի, ոչ այն- քան զօրեղ կազմուածքով, որ առհա- սարակ մարդ կերեւակայէ չինացիե- րը՝ հակառակ քնքուշ, պղպիղ ու շը- նորհալի ճարտարներուն ։ Ու-Թայ- Չանկը իր բովանդակ վարժուածքով, իր նորը և ազնուական էութեամբ կը մատնէ հին քաղաքակրթութեան մը զաւակ ըլլալը ։ Ֆրանսերէն կը խօսի, տեղ տեղ բառերը կը շնչուի իս- կական ֆրանսացու մը պէս, բայց և այնպէս իր ֆրանսերէնը յայտնի է որ օտարի մըն է ։ Քաղաքային պարտէզի մօտերը՝ իր տան մէջ Չինաստանի կը- տոր մըն է ստեղծած ։ Բազմաթիւ ար- ծածկով և ոսկիով բանուած կարմիր կոպիւնեան գորգեր, ամեն տեսակի վիշապներ, արծուաւիճներ, տի- տանեան գլխարկներ, Աստուածներ և

կուռքեր ապշած կը նային իր տան առաջին յարկի դահլիճէն վար ։ Եւ սեղաններու վրայ, պատուհաններու սակ դրուած են հին չինական անօթ- ներ, պնակներ, ըրերգներ և ապա- կիներ ։

Իսկ ինքը հագած է յայտնի չինա- կան սարազը, աղօտափայլ սեւ մե- տաքսէ պարեզօտը ։ Այս Ասիացու դիմադճերուն վրայ մեզմ լրջութիւն մը կայ, որ հազիւ թէ քառասուն տարու կը ցուցնէ, որը սակայն յի- սուննոց մը ըլլալու է ։ Սեփ սեւ գը- լուխը, ուրկէ երկու խորիզաւոր թուս աչքեր դուրս կը փայլին զինք երիտասարդ կը ցուցնեն ։

Եւրոպայի մէջ իտալացիք են յար- գուած իբրեւ հին քաղաքակրթու- թեան մը զաւակներ, որոնց կը վե- րագրեն այն թովչանքը, զոր իրենց անձնատուութիւններուն վրայ կայ — բայց ի՞նչ է սոնոց քաղաքակրթու- թեան հնութիւնը՝ համեմատելով ա- մենամասնական չինականին հետ ։ Եւ այնպէս կը թուի, թէ յանկարծ հին չինական իմաստութեան հոսանքին մէջ կօնֆիցիուսի մը փիլիսփայտու- թեան մէջ խորասուզուած են, որ մեր կրթութեան այնքան (դասական գրո- ներէն) յարգուեցաւ, երբ այդքան ազնիւ, քաղաղ հեռաւոր արեւելքու մը — ինչպիսին Ու-Թայ-Չանկն է- ղէմ առ ղէմ կը գտնուին ։

Ան Լի-Չու-Նի-Չանկի, արեւելեան Ասիայի այդ Բիւսարդի-ն, երբեմնի քարտուղարն էր ։ Անոր պէս հայրե- նասէր և իր հայրենիքի բարեկորու- զումներուն բարեկամ, բնական է, որ մեծ շահագրգռութեամբ մը հետե- լի արեւելեան ասիայի պատերազմին ։

— «Ես», նկատեց ան, «քանի մը ատենէ ի վեր Փէքինկ-էն լուր չունիմ ։ Կերպիւն հեռագրական տեղեկութիւն- ները անցած ամսի կէսերու թուակա- նովն են ։ Թէ ինչ և թէ եւրոպական արքունիքներու միւս չինական ղե- ն» ։

ԶՄՊԻԱԾ ՔՐԲԻՁԸ



Նուէր Ա. Ահարոնեանին

Բ. 3

—Բայց գիտես, Աւօ, յանկարծ ուշքի գալով, ուրախ-ուրախ կան- չեց միսս Ջօնը, քրդերը իրենց հետ տարել են և սուրբ գիրքը, նը- բանք կը կարդան և կը դառնան լաւ քրիստոնեաներ և այլեւս մարդ չեն թալա... ։

Նա չկարողացաւ վերջացնել իր խօսքը ։ Յանկարծ Աւօի ղէմքի խոր- չերից, Աւօի ղէմքը, Աւօն ամբողջա- պէս, որպէս ձգւած զապանակ, կար- ծես միանգամայն պատուեց, որո- տաց, դուրս վիժեց քրքիլի կերպա- րանքով նրա հոգու մէջ ամբարած թոյնը, ամբողջ մաղձը, գնաց կպաւ միսս Ջօնի ամենասուրբ շղերին ։ Վիրաւորեց նրա ամենանւիրական զգացմունքը, անցաւ, տարածեց ամենուրեք ։ Այդ զսպւած քրքիլի առաջ զողաց Միսսը, ամբողջ մարմ- նով սարսուց, երերաց, ոտքերը ծաւեցին և վայր ընկաւ ։ Այդ քր- քիլի առաջ երերաց և նրա հաւատը ։ Սարերն ու ձորերն էլ սարսափով ընդունեցին այդ թունոտ, խայթող քրքիլը, նրանք էլ դողդողացին ։

—Մեզ կոտորում են, որոտաց Ա- լօն, որովհետեւ մենք անհաւատ ենք, որովհետեւ չենք մրմնջում ձե-

րով անունը, որովհետեւ Նոյն ձեւով ենք պատասխանում քրդերին, իսկ ձե՛զ... ա՛յ, թէ ի՞նչ էք քարոզում զու՛ք... ։

Եւ նա քրքջաց ։ Ասես այդ տարօ- րինակ ծերունին որոշել էր սպանել, մեռցնել այդ պատերին, ասես ու- զում էր ձե՛ք տարիներ շարունակ թոյնը միմիայն այս մի հատիկ և և խեղճ կնոջ գլխին թափել, նրանից վրէժ առնել ։

Միսս Ջօնը աչքերը կտրեց գետ- նից, մի խեղճ հայեացք պցեց Աւօի վրայ, մի հայեացք, որ կ'ործես ո- ղորմութիւն էր հայցում, կարծես լուռ աղաչում էր խնայել իրեն ։

Աւօն զգաց սոյգ, զգաց և սիրտը հովազաւ ։ Նրանք պատրաստեցին շտապով հեռանալ այդ վտանգաւոր ձորից ։

—Էլի, էլի՛. նորից հիւսպանաձգու- թեան ձայնք, հէնց այն կողմից, ուր անհետացան քրդերը ։ Էլի՛, էլի՛, աւելի ու աւելի տենդոտ բնաւորու- թիւն է ստանում ։

Վ՛ը՛զ, վ՛ը՛գ... ։

Գ.

Արեւը արդէն բոլորովին թխբել էր ։ Անցան բուպէներ, ծանր բուպէ- ներ ։ Այնտեղ, լեռների յետեւում հրացանաձգութիւնը կամաց-կամաց դանդաղում, նւաղում էր ։ Միսսը և Աւօն, երկուսն էլ մտազբաղ ե- լուռ, շտապում էին աշատել այդ

արեան ձորից, որից կարծես իրօք արեան հոտ էր փչում ։

Յանկարծ շատ մօտիկից, հէնց ի- րենց ետեւից լաւեց ձիւն ոտնածայն- ներ ։ Նրանք հտ նայեցին, և անհ- չորս ձիւնորներ ։ Դրանք հայեր էին, չորսն էլ զինուած և քրդական հա- զուստով ։ Զարգանդը իոկոյն փակեց միսս Ջօնին, նա կ'զկեց ձիւն վրայ, մի անբնական ճիշ արձակեց և աս- պանդակեց ձիւն ։ Նա կարծեց թէ հէնց նոյն քրդերն են, որ գալիս են սպանելու ։ Միացած թալանելու ։ Բայց Աւօն հէնց առաջին հայեացքից ճանաչեց նրանց ։ Նա զարթոցաւ և մի զօրեղ ցնցում ստացաւ ։

Չինեւած մարդիկ մօտեցան, նրանք նկատեցին որ կ'ինը վախենում է ։

—Մի վախեր, գիմեց առաջից զը- նացողը, որը դրանց մեծն էր, մենք քրդեր չենք, մենք աւազակներ չենք, մենք էլ ձեզ նման քրիստոնեաներ ենք ։

Դրանք ճանաչեցին Աւօն ։

—Օ՛հ, լոյս քո տեսողին, Աւօ ։ Ի՞նչ ունես այս ձորում, այս կնոջ հետ ։ Տղերք, չէք ճանաչում, սա մեր «Երոս ծերունին» է, այն ու- ժեղ, ցնցող, մաքուր հոգին ։

Նրանք իսկոյն ցած թոտն ձիերից, ուղակի յարձակեցին իրար վրայ և զրկախառնեցին ։ Բանի՛ տարի է, որ զատուել են իրարից և նրանք ասես աշխատում էին մի բուպէի մէջ առնել այնքան երկար ժամանակի կա- րօտը ։ Աւօի խոր կնճիռները բաց-

ւեցին, նրա ղէմքը փայլեց, ուրախ ժպիտ երեւաց այնտեղ ։ Եւ նրանք սկսեցին զրուցել, պատմել իրենց դարձերից, ցաւերից, անցեալի դառն ու քաղցր յիշողութիւնները ։ Այնքան բան ունէին նրանք իրար հարողդելու, նրանց սիրտը ցատոտ մտածունքներով, բազմապիսի զար- գերի արկածներով լի շտեմարան է անսպառ, անհատուած ։ Եւ բացում կին իրար առաջ այդ սրտերը ։ Աւօն, այդ մշտական լուռ և խորհրդաւոր ծերուկը, այժմ անդադար խօսում էր, պատմում, ասես բլրուէլ էր կո- րել և բառերը նրա բերնից, որպէս անսպառ աղբրից, դուրս էին թափ- ւում ։

Անձանօթ մարդիկ և Աւօն այն- քան յափշտակած էին, որ միսս Ջօ- նին միանգամայն մոտացել էին ։ Նա ապուշի նման նայել էր այդ հեռա- քրքիլը, միեւնոյն ժամանակ խոր- հրդաւոր տեսարանին, նայում, նա- յում և ոչինչ չէր կարողանում հաս- կանալ ։ Սկզբում նա հասկանում էր նրանց խօսակցութիւնը, բայց իե- տոյ լեզուէն դարձաւ իրեն անձանօթ թւում էր, որ իրեն անձանօթ լե- զու է, ոչ հայերէն, ոչ թուրքերէն, ոչ էլ քրդերէն, այլ մի բազմաթիւ անձանօթ, շինձու, պայմանական ընդու է ։

—Էլի էն ապիւ, էն կեանքով լի ու ոպեւորող հոգին ես, բարի ձե- րուկ, վատ կեանքը ոչինչ մաքուր բան այնտեղ չի փչացուել ։ Զը՛, ք՛

պաներու համար այս բանը հաստատ է թէ Չինաստանը այս պատերազմի ընթացքին խիստ չէզոքութիւն պահ պահել լինած է: Իմ կառավարութեան այս որոշումը իշխան կողմից խոստովան յայտնեցի և ան արդէն գիտատեղիէլ, որ Չինաստանի մէկ մասը իր զէպի ճարտանցիները տածած համակարգի պատճառով անոնց կողմը բռնէ— ուրիշ մասեր նորէն անտարբեր գիւրջ մը կը բռնեն զէպի այս պատերազմը...

(Շարունակելի)

ԿՈՎԿԱՍՏԱՆԻ ՄՐՈՒՆԻԿ



Յունիար 12.25. Երբագոյն լուրերը որ պիտի հաղորդեմ ձեզ կարսի և Ալեքսանդրապոլի գէպըքը: Են: Մի շարաթ առաջ կարսում, ցերեկով, ամենագլխաւոր փողոցի վրայ, քաղաքի վրացի ոստիկանապետի գէմ սպանութեան փորձ կատարեց: Այդ զբժուծ ոստիկանապետը, որ յայտնի է իր սխրագործութիւններով, դատապարտուած է մահան: և եթէ այս անգամ անյաջող էր փորձը, անշուշտ մի ուրիշ անգամ պիտի յաջողարդատու ընանից: Յայտնի էր նա մատուցութիւններով և իշխանութեանը սիրելի դառնալու համար, շատ անմեղներին ձերբակալելով:

Յրկորդ գէպը, որ տակն ու վրայ է արել մարդը կովկասի զինուորական վարչութիւնը 500000 հրացանի փամփուշտների անհետանալն է Ալեքսանդրապոլի բեր-

դից: Երեք օր առաջ, մի առաւօտ թունաւորուած է մեռած գտնուում են մի կազանցի թաթար զինուորի, բերդի մէջ գտնուող զէնքերի մթերանոցի մօտ: Երբ բաց են անում մթերանոցը գրտնում են բոլորովին դատարկ: Կէս միլիոնի հասնող այդ փամփուշտները, որ գնահատուած է 25,000 ուրլի, անհետացել են երկու հայ զինուորների հետ: Ասում են որ փամփուշտների կրելը կատարւել է մի քանի օր, լաւ կազմակերպուած խմբով: Կայ և պտտում է մի ուրիշ բացատրութիւն էլ: Ռուս սպաների գողութեան խմբը յայտնի է ամէնքին: Ասում են որ սպաները, փամփուշտները բերդ հասցնողների հետ միացած, ծախել են արկղերի բովանդակութիւնը և դատարկ արկղերն են գրել մթերանոց: Եւ յիշուած մթերանոցի ո՛չ դուռն և ո՛չ էլ կողպէքն են կոտրած գտնուած, սակայն փամփուշտները արկղերի միջից, մինչեւ յետիւք թռել են: Ենթադրում են որ սպաները ըսպանել և անհետացնել են տել այդ երկու հայ զինուորներին կամենալով օգտուել հանգամանքից, ծածկել իրենց գողութիւնը և մեղքը հայերի վրայ բարձել: Այսպէս թէ այնպէս, այս բոլոր գողութեան մէջ հայերի դերունենալը կասկածելի է շատ և աւելի հաւանական է սպաների գողութիւնը: Եւ զարկուած է Ալեքսանդրապոլ պատերազմական գաշտային ասեան՝ գործը քննելու:

Հետեւանքները կը հաղորդեմ: Էլ միածնի պրկուրոր կանչելին արձակուած է պաշտօնից, չը նայելով որ լրագրիները հաղորդում են թէ նա արձակուող է միայն ստացել երկու ամսով: Բարբախտութիւն իրեն— կանչելի համար, որ շտապել է վախշել զէպի հեռաւոր նահանգները, ազատուելով վրէժից գրութիւնից: 25^o որ վերջերս թափուող այնքան հայերի անմեղ արիւնը ծանրանում է կիսովին այդ լպիրը աբարածին վրայ:

Պատմում են որ կանչելին գնալուց առաջ կամեցել է տեսնել Հայրապետի հետ, սակայն Հայրիկը մերժել է ասելով «թող կորսուել աչքից անփոքաբար» և ասում են որ անպիտան մարդը գլխիկոր և ընկճուած շտապել է հեռանալ Էլ միածնից:

Այս բոլորից յետոյ կուգէի մի ուրախ լուր հաղորդել մեր հեռաւոր եղբայրներին:

Յայտնի վէլիչկօն, այն մարդը, որ Գալիցիայի հետ սկսեցին հալածանք հայերի գէմ, մեռել է Պետերբուրգում զեկ, 30ին, իրեն անիծեալ տարւայ վերջին օրը: Ռուսամոլ թերթերը էջեր նուիրեցին նրան, իսկ շատերը լուր մեացին և կամ մի քանի վրժու բառերով դամբանական կարգացին: Վէլիչկօյի քայլերին համակրող «նովոյէ վրէժիա» ռուս թերթի մէջ իսկ մարդ ուրախութեամբ կարդում է թէ ինչպէս ռուս հասարակութեան լաւ մասը

գիտէր վէլիչկօյի ինչ լեւելը և թէ ինչպէս նրա թաղմանը բացակայում էր ռուս երիտասարդութիւնը: «նովոյէ վրէժիա» այդ բացակայութիւնը բացատրում է ռուս մարդու վատ սիրտ ունենալով: «սակայն ճիշտ դրա հակառակը: Բացատրել պէտք է նրանով, որ ռուս երիտասարդութիւնը շատ աւելի լաւ սիրտ ունի, քան կարծում են, և որ նա գիտէ ճանաչել իր միջի գնուաներին:

Ստտութիւնները շարունակում են այժմ խուլ ձեւով, բայց շարունակում են: Իսկ գրաքննիչական խտտութիւնները անցնում են թուրքիայից և դրա համար էլ մեր թերթերը ամբողջովին դատարկութիւն են ներկայացնում: «Նոր-Իրաքի մասին ասում են, որ բոլորովին չպիտի հրատարակել, բայց կը տեսնենք «Մշակ» ու «նովոյէ Արազէնի» կսկսին յունվար 15ից հրատարակել: Ընդհանրապէս վախկայ, որ «Մշակ» անգամ պիտի դադարեցնեն: Վրացերէն «կուսութեան» գաղտնիքը է այս օրւանից, յայտնի չէ որքան մամանակով:

Ականատեսները պատմում են որ երէկ կովկասեան բորենին— Գալիցիայի կռթնած մի պաշտօնէի, ոտքով ելեր էր շլշելու իր պալատի առաջ:

Պետերբուրգից տխուր լուրեր են ստացում: Լուր բերողները ընդհանրապէս պատմում են որ

քրքիչները, քո տարրինակ, թունոտ ծիծաղք քանի՞ անգամ խայթել է էս պատու միսիօնարուհու սիրտը, անշուշտ նա կը ձգտի քեզ լաւ հաստացեալ դարձնել, հա՛, հա՛...

Եւ ի՞նչ բարի պտուղին է ոստակելի: Եւ այդ խենթ պատուը, ասենք բոլոր էդ շաւ հաւատարեցիները խենթ են: ասում եմ էդ խենթ թը ինձ քարոզում է, որ անօրէնը մարկացած սրով մեզ մօտենալիս, մենք պիտի վզներս ծռենք, միայն Աստուծոն ներկենք եւ նրա անուն մրմնջանք:

—Հա՛, խօսքի թունեցի, նկատեց դրանցից մեծը, և մտաբայ սասել, որ էս սարի յետեւը պատահեցինք երեք քրքերի, կուի բունեցի՞ք, երկուսին սպանեցինք, բայց երրորդը փախաւ, ազատուեցաւ: Իրանց մօտ գտանք 20 թուան, մանր մուկեր քանիս և մի սուրբ գիրք: Գիրքը ընկած էր ձորի մէջ, մի քանի թերթ էլ պատառուտել են: Երեւում է, և էտուղ մարդ են թալանել և գուցէ՛ ով գիտէ, թալանողները եղել են ըստ քո շաւ հաւատարեցիները, մենք հեռուից նկատեցինք, որ էն ձորի մէջ մարդ են թալանում ու սկսեցինք հրացաններ արձակել:

—Այո՛, երկուսն էլ «լաւ հաւատարեցիներ» էին, տասնձին հեգնական և կ՛ու սօսնով կանչեց Աւօն եւ բարձր ծիծաղեց:

—Ինչո՞ւ ես ծիծաղում, աւօ, ո՞վքեր են եղել դրանք:

—Ո՞վքեր, երկու օլաւ հաւատարեցիներն, ես եւ միս Ջօնը: Եւ լսեցի միս Ջօնին, բարձրացրեց ձայնը Աւօն եւ ակնարկեց Միսին, քրքերը եկան, սկսեցին թալանել մեզ, իսկ ես եւ միսը միմիայն աղօթք էինք մրմնջում, Տիրոջ խօսքերից խօսում, արդարութիւնից ասում, իսկ քրքերը ստող-ստող քոքում էին մեզ վրայ, ճիշդ այնպէս, ինչպէս այժմ ես եմ ծիծաղում—հա՛, հա՛...

«Վարակիչ էր այդ ծիծաղը, նրա համոզմունքի, նրա ցաւոտ կեանքի արտայայտիչը: Անձանօթ ճանապարհորդներն էլ վարակեցին, նրանք էլ սկսեցին ծիծաղել, բարձր, ստող...»

Միս Ջօնը շուտաւ էր և ոչինչ, ոչինչ չէր հասկանում այդ ծիծաղներէից, միայն պարմանում էր, թէ ինչպէս այդ լուս ձերուկը այդպէս խօսող է դարձել:

—Պանձ, զարձաւ Աւօն նրան, քեզ մի լաւ լուր ունեմ հաղորդելու:

—Ի՞նչ, Աւօ:

—Այս անձանօթ մարդիկ սպանել են մեզ թալանող քրքերին:

—Հա՛, սպանել են, շատ լաւ են արել, շատ լաւ, նրանց տեղն էր:

—Ինչո՞ւ ես ուրախանում, խանձ, չէ՞ որ սրանք յանցանք են գործել, մարդ սպանել, զա մեղք է, Աստուծոն զէմ:

—Եսր նրանք մեղաւոր էին, ախր նրանք ինձ թալանեցին, իմ իրերս տարան:

—Ախր ինձ թալանեցին, հա՛,

հա՛, հա՛, հապա «նրանք», «էն քրքերը» մեղաւոր չեն, որ անմեղ տեղը թալանում, աւերում են մեր վաթա՛ւը, կոտորում հայերիս, ասում եմ, հապա նրանք մեղաւոր չեն...

Միս Ջօնը լուս աչքերը ցած թողեց, ասես ամառում էր նայել ուղիղ Աւօնին, այդ սպանիչ մարդի աչքերին:

—Ահա քո փողերը ևւ իրերը, խանձ, քրքերի ձեռքից են առել, անա և սուրբ գիրքդ, գտել են ձորում, քրքերը արդէն կարդացել և զարձել են «լաւ հաւատարեցիներ»:

Միս Ջօնը կոպերի տակով նայեց պատանոտած գրքին, ձեռքը մեկնեց և վերցրեց զայն:

—Դէ՛, Աւօ, արդէն ուշ է, մե՛ք գիտում ենք, ինչքան ճանապարհ ունենք այնելու, դուք էլ շտապէք:

Նրանք նորից համբուրեցին, նրստեցին ձիերը եւ շարժեցին ստալ:

—Բարի ճանապարհ, աչնիւ մարդիկ, մրմնջաց միս Ջօնը, Ովքե՞ր են դրանք, Աւօ, ի՞նչ լաւ մարդիկ են:

Մանր հառաչեց Աւօն և խորհրդաւոր կերպով արտասանեց,

—Նրանք, խանձ, նրանք էլ «անհաւատ» են, ինձ նման զլատ հաւատարեցիներ», բայց արդար, պաշտօնի մարդիկ:

Այս անգամ ասես այդ զսփան բառերը այնպէս խիստ, այնպէս անողոք չհնչեցին Միսի ականջին, նա հետզհետէ իրականութիւն, անտղք

ճշմարտութիւն էր գտնում այդ մութ անձնաւորութեան մէջ եւ լուս խոնարհում:

—Այո՛, արդար, աչնիւ մարդիկ, լուս թոթովեց միսիօնարուհին: Բայց ո՞ւր են գնում, Աւօ, էդ անձանօթ, խորհրդաւոր մարդիկ:

—Ո՞ւր են գնում, գնում են ա՛յ էնտեղ, էն սարերի յետեւը, էնտեղ մի մեծ աշխարհ է, ուր տառապանքի մէջ սպրում է մի ամբողջ ժողովուրդ, ուր անընդհատ արիւն է հոսում, ուր շատ կան քեզ նման թոյլ արարածներ, անպաշտպան ընտանիքներ, որոնք անդադար կողոպտուում, սպանւում, կոտորւում են, կոտորվում են հէնց այդ քրքերի ձեռքով: Ահա էնտեղ են վազում, հարստահարածներին պաշտպանելու համար են շտապում, էն վերան...

Աւօն ծանր «ախ» արձակեց եւ աչքերը յառեց զէպի հեռու, հեռու... Միս Ջօնը նկատեց, որ այդ խիստ ուշադրաւ, խորհրդաւոր ձերուկի աչքերը թացացան եւ քամեց արկու արտասուք: Թեթեւ քամի կար, տաւ իր թեւերի վրայ եւ տարաւ այն արիւնոտ երկիրը, այնտեղ, ուր այնքան արտասուք է թափւում, գնացին նրանց հետ խառնելու:

Այդ յուզմունքի տակ ձգեց եւ Միսի սիրտը, նա էլ փուլ եկաւ եւ արտասուքները գլղլղէն թափւեցին:

Շ. Ֆրանգեանց
Սալմաստ, 1903
Վերջ

